ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

12.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/19

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.02.2018թ. թիվ 04/26-3/2880-18 գրությամբ Ֆ/Ա Իշխան Լյուդվիգի Միրզոյանին (ՀՎՀՀ 81119289) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.02.2018թ. թիվ ԴՎԱ/531 գրության հիման վրա 16.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ֆ/Ա Իշխան Լյուդվիգի Միրզոյանին (այսուհետ՝ նաև Ֆ/Ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 13.02.2018թ. թիվ ԴՎԱ/531 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. փետրվարի 6-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է լոլիկի և վարունգի N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 09.02.2017թ. հրապարակվել է www.gnumner.am կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ֆ/Ա Իշխան Լյուդվիգի Միրզոյանը 22.02.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ֆ/Ա Իշխան Միրզոյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով գնանշման հարցման մրցույթին, որի արդյունքում ՀՀ ՊՆ-ի և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքվել է թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ պայմանագրի N1, N2, N3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մաս:

Համաձայն պայմանագրի հավելված 2-ի՝ վարունի և լոլիկի առաքումը պետք է իրականացվեր մատակարարի տրանսպորտային միջոցներով՝ ք. Սիսիան, Ռաֆֆու 2-րդ նրբ., և ք.Վանաձոր, Արաբկիր 1 հասցեներով, ըստ պատվիրատուի հայտի:

07.02.2017թ. պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ 06.02.2017թ. պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջի համաձայն միակողմանի ամբողջությամբ լուծել է լոլիկի և վարունգի N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը:

19.02.2017թ. Ֆ/Ա-ն 07.02.2017թ. գրությանն ի պատասխան հայտնել է, որ համաձայն պայմանագրի հավելված 2-ի՝ վարունի և լոլիկի առաքումը պետք է իրականացվեր մատակարարի տրանսպորտային միջոցներով՝ ք. Սիսիան, Ռաֆֆու 2-րդ նրբ., և ք.Վանաձոր, Արաբկիր 1 հասցեներով, ըստ պատվիրատուի հայտ, սակայն մինչև օրս պատվիրատուի կողմից հայտ առհասարակ չի ներկայացվել, ինչի պատճառով Ֆ/Ա-ի կողմից վարունի և լոլիկ չի առաքվել և Ֆ/Ա-ն կրել է ֆինանսական վնասներ: Ֆ/Ա-ն գրությամբ հայտնել է նաև, որ պատվիրատուն 06.02.2017թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծեոլով՝ գործել է ոչ իրավաչափ:

Խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ Ֆ/Ա-ն չէր կարող առանց պատվիրատուի հայտի կատարել ապրանքի առաքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 524-րդ հոդվածի համաձայն՝

1. Ապրանքների մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից ապրանքները մատակարարման պայմանագրի մյուս կողմին՝ գնորդին կամ պայմանագրում, որպես ստացող նշված անձին առաքելու (հանձնելու) միջոցով:

2. Այն դեպքում, երբ մատակարարման պայմանագրով նախատեսված է գնորդի իրավունքը՝ մատակարարին ցուցումներ տալ ապրանքներն ստացողներին առաքելու (հանձնելու) մասին (բեռնման կարգադրագիր), մատակարարն ապրանքները հանձնում է բեռնման կարգադրագրում նշված ստացողներին:

3. Բեռնման կարգադրագրի բովանդակությունը և այն գնորդի կողմից մատակարարին ուղարկելու ժամկետը սահմանվում են պայմանագրով: Եթե բեռնման կարգադրագիր ուղարկելու ժամկետ պայմանագրով նախատեսված չէ, այն պետք է մատակարարին ուղարկվի մատակարարման փուլն սկսվելուց առնվազն երեսուն օր առաջ:

4. Գնորդի կողմից բեռնման կարգադրագիրը սահմանված ժամկետում մատակարարին չտրամադրելը վերջինիս իրավունք է տալիս հրաժարվել մատակարարման պայմանագիրը կատարելուց կամ գնորդից պահանջել վճարելու ապրանքների համար: Մատակարարն

իրավունք ունի նաև պահանջել հատուցելու բեռնման կարգադրագիրը չներկայացնելու հետ կապված վնասները:

Այսպիսով, Ֆ/Ա-ն գտնում է, որ պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ՝ 06.02.2017թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելով, և դրանից հետո պահանջելով Ֆ/Ա-ից վճարել տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, և տույժ՝ պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 09.08.2017թ., հայտերի բացումը տեղի է ունեցել 09.08.2017թ. և ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով նախատեսված էր մատակարարումները՝ 6 չափաբաժինների մասով իրականացնել սեպտմբեր և հոկտեմբեր ամիսներին:

Մինչդեռ, արդյունքում պատվրատուի և Ֆ/Ա-ի միջև պայմանագիրը կնքվեց 18.10.2017թ.՝ ավելի քան երկու ամիս հետո, այն էլ միայն 2,3,5,6 չափաբաժինների մասով, /1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առհասարակ պայմանագիր չկնքվեց/ և մատակարարման ժամկետ սահմանելով մինչև 01.12.2017թ., այսպիսով խախտելով բոլոր ողջամիտ ժամկետները, ինչպես նաև փոփոխություններ կատարելով պայմանագրի նախագծում՝ խախտելով 16.12.2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-ին մասով և հրավերի 9.7 կետով սահմանված պահանջները, քանի որ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը, ինչը նաև հաստատվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից թիվ ՍՑ-ԷՍ- 2017/63 և թիվ ՍՑ-ԷՍ-2017/71 Ձեր կայացված որոշումներով:

ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 305-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:

Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, բացառությամբ այն հետևանքների, որոնք կապված են գործարքի անվավերության հետ: Նման գործարքն անվավեր է կնքելու պահից:

Այսպիսով, Ֆ/Ա Իշխան Միրզոյանի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 գնման պայմանագրը կնքվել է 16.12.2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին անհամապատասխան, իսկ ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, ուստի և ԳՀԱՊՁԲ-7/74-2 գնման պայմանագրը ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է:

Միևնույն ժամանակ, քանի որ ԳՀԱՊՁԲ-7/74-2 գնման պայմանագրը ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է, ուստի և ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև ՀՀ պաշպանության նախարարության կողմից ԳՀԱՊՁԲ-7/74-2 գնման պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հետևանքի:

Ինչպես նաև ԳՀԱՊՁԲ-7/74-2 գնման պայմանագրը ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 305-րդ հոդվածի ուժով անվավեր է, ուստի և ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 304-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր գործարքը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների, այդ թվում նաև պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքով՝ պահանջել ընկերությունից վճարել տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, և տույժ՝ պայմանագրի 6.2 կետի համաձայն, հետևանքի:

16.12.2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից Ֆ/Ա Իշխան Միրզոյանը գտնում է, որ իր կողմից թույլ չի տրվել 16.12.2016թ.-ին ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի որևէ խախտում, ուստի խնդրում է Ֆ/Ա Իշխան Միրզոյանին չներառել գնումների գործնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ֆ/Ա-ի լիազորված ներկայացուցիչներ Աննա Ղուկասյանը և Արմեն Միրզոյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/19 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.11.2017թ. թիվ 03/26-3/20703-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.02.2018թ. թիվ ԴՎԱ/531 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), Ֆ/Ա Իշխան Միրզոյանի 22.02.2018թ. գրությամբ Խորհրդին ներկայացրած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով Ֆ/Ա Իշխան Միրզոյանը ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից՝ 1-ից 6-րդ չափաբաժինների մասով, և վերջինիս նույն չափաբաժինների մասով առաջարկվել է կնքել լոլիկի և վարունգի մատակարարման պայմանագիր:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74» ծածկագրով գնանշման հարցման հրավերի (այսուհետ՝ Հրավեր) գնման պայմանագրի նախագծի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ վարունգի և լոլիկի մատակարարումը պետք է իրականացվի 2017թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, ընդ որում առաքումը իրականացվելու է մատակարարի տրանսպորտային միջոցներով՝ ք. Երևան, Սարմի 103, ք.

Սիսիան, Ռաֆֆու 2-րդ նրբ., ք. Վանաձոր, Արաբկիր 1 հասցեներով, ըստ պատվիրատուի հայտի:

ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքվել է թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի «ենթակետի» համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք;

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանգրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրի և Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 01.12.2017թ. մատակարարել 28,008 կգ լոլիկ և վարունգ: Ընդ որում, վարունգի և լոլիկի մատակարարումը իրականացվելու է մատակարարի տրանսպորտային միջոցներով՝ ք. Սիսիան, Ռաֆֆու 2-րդ նրբ., ք. Վանաձոր, Արաբկիր 1 հասցեներով, ըստ պատվիրատուի հայտի:

Պայմանագրով նախատեսված վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 6,987,996 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը 31.01.2018թ. զեկուցագրով հայտնել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին, ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի

միջև 18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ժամկետներում Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից 16.01.2018թ. դրությամբ մատակարարում չի իրականացվել: Միաժամանակ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետն առաջարկել 16.01.2018թ. դրությամբ՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետով սահմանված պահանջը, Պայմանագիրը միակողմանի լուծել և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի նկատմամբ կիրառել օրենսդրությամբ սահմանված տույժերն ու տուգանքները:

Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը (4 չափաբաժինների մասով):

Պատվիրատուն 07.02.2017թ. գրությամբ դիմել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանին՝ տեղեկացնելով, որ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.02.2018թ. միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում վճարել Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացուցիչը պնդեց 22.02.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ ներկայացված դիրքորոշումը: Ֆ/Ա-ն Խորհրդին հայտնեց, որ Պայմանագրի հավելված 2-ի համաձայն՝ վարունգի և լոլիկի առաքումը պետք է իրականացվեր մատակարարի տրանսպորտային միջոցներով՝ ք. Սիսիան, Ռաֆֆու 2-րդ նրբ., և ք.Վանաձոր, Արաբկիր 1 հասցեներով, ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հայտերի, սակայն պատվիրատուի կողմից որևէ հայտ չի ներկայացվել, ուստի և Ֆ/Ա-ի կողմից ապրանքի առաքում չի իրականացվել՝ ինչի հետևանքով Ֆ/Ա-ն կրել է ֆինանսական վնասներ: Նշվածով պայմանավորված՝ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ներկայացուցիչը եզրակացրեց, որ պատվիրատուն 06.02.2017թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ֆ/Ա-ի ներկայացուցիչը հավելեց նաև, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով նախատեսված մատակարարումները 6 չափաբաժինների մասով պետք է իրականացվեին սեպտմբեր և հոկտեմբեր ամիսներին: Մինչդեռ, Պատվիրատուի և Ֆ/Ա-ի միջև պայմանագիրը կնքվել է 18.10.2017թ.՝ ավելի քան երկու ամիս հետո, այն էլ միայն 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով, (1-ին և 4-րդ չափաբաժինների մասով առհասարակ պայմանագիր չի կնքվել) և մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 01.12.2017թ., այսպիսով խախտելով Հրավերի պայմանագրի նախագծով նախատեսված բոլոր պայմանները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Հրավերի 9.7 կետի համաձայն՝ մինչև նույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Իշխան Միրզոյանի միջև 18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանագրի Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ապրանքների մատակարարումը իրականացվելու է մատակարարի տրանսպորտային

միջոցներով՝ ըստ Պատվիրատուի հայտի, սակայն վերջինիս կողմից Պայմանագիրը կնքելուց հետո ապրանքի մատակարարման որևէ հայտ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին չի ներկայացվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ 18.10.2017թ. կնքված թիվ ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով պայմանգիրը կնքվել է Հրավերով նախատեսված Պայմանագրի նախագծում (գնման ժամանակացույցում) Պատվիրատուի կողմից կատարված փոփոխություններով՝ մասնավորապես, Պայմանագրում որպես մատակարարման ժամկետ նշված սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների փոխարեն սահմանվել է «2017թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 01.12.2017թ.» մատակարարման ժամկետը, ինչպես նաև Պայմանագրի նախագծից հանվել են 1-ին և 4-րդ չափաբաժիններով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքների խմբաքանակները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են և դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:
- 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման

առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝

- փոփոխություններ կատարելով Պայմանագրի նախագծում՝ խախտել է Օրենքի 36-րդ հոդվածի 4-ին մասով և Հրավերի 9.7 կետով սահմանված պահանջները, քանի որ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը:

- Ֆ/Ա Իշխան Միրզոյանին ապրանքների մատակարարման հայտ չներկայացնելով՝ վերջինիս զրկել է պայմանագրով նախատեսված ժամանակահատվածում գնման ժամանակացույցով սահմանված մատակարարումն իրականացնելու հնարավորությունից:

- Ֆ/Ա Իշխան Միրզոյանի հետ 18.10.2017թ. կնքված ԳՀԱՊՁԲ-7/74-2 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշում ընդունելով՝ խախտել է Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ֆ/Ա-ին ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.02.2018թ. գրությամբ Ֆ/Ա Իշխան Լյուդվիգի Միրզոյանին (ՀՎՀՀ 81119289) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**